Սիրելի՛ շրջանավարտներ,

Ջերմորեն շնորհավորում եմ դպրոցական Վերջին դասի կապակցությամբ։ Դուք այսօր ձեր առաջին քայլն եք կատարում մեծ կյանքի ճանապարհին և մինչ կսկսեք այն ցանկանում եմ հիշեցնել ձեզ, որ ձեզնից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ ունակություններ և տաղանդներ, որոնք կարող են օգնել ձեզ կյանքում հաջողության հասնել։ Հավատացեք, որ մենք՝ ավագներս, ոգևորվում ենք ձեր յուրաքանչյուր հաջողությամբ։

Ցանկանում եմ շնորհավորել և իմ երախտիքի խոսքը հղել մեր մանկավարժներին իրենց բարդ ու պատասխանատու աշխատանքի համար։

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ մեր շրջանավարտներին և մաղթում երջանկություն, սեր և հաջողություն ձեր բոլոր նախաձեռնություններում։ Հիշեք, որ աշխարհը բաց է ձեր առաջ, և դուք կարող եք հասնել այն ամենին, ինչի մասին երազում եք։ Զգտեք ձեր նպատակներին և մի վախեցեք մարտահրավերներից, քանի որ դրանք ձեզ միայն ավելի ուժեղ կդարձնեն։

Բարի ճանապարհ դեպի նոր կյանք։